


ԾՐԱԳԻՐ — ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ

(ՀԻՄՆՈՒԱԾ 1928 ՄԱՅԻՍ 28-ԻՆ)



1936

Գ Ա Հ Ի Ր Է

Տպարան «Յուսարեր»

ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

I. ՆՊԱՏԱԿԸ ԵՒ ՈՒՂԻՆ

1. Հայ մշակոյթը, հայ լեզուն, հայ ոգիով դաստիարակութիւնը վտանգի տակ են այսօր մասնաւորապէս գաղութներու մէջ: Անհարազատ ազդեցութեանց տակ՝ հայ լեզուն կ'աղձատուի, ընդհանրութեան անհասկնալի ըլլալու աստիճան: Հայ ոգիով դաստիարակութիւնը կը բացակայի, ընդհանաւր ղեկավարութեան չգոյութեան պատճառով: Հայ մշակոյթը և աւանդութիւնները կը խաթարուին, անտեսուած ըլլալու հետեանքով:

Հայութեան գոյութեան սպառնացող այս վտանգները դիմագրաւելու համար, զանազան գաղութներու մէջ բազմաթիւ մշակութային և կրթական միութիւններ կազմուած են տարբեր անուններու տակ: Վտանգին սաստկութիւնը հարկադրած է մեր մէջ գոյութիւն ունեցող քաղաքական կուսակցութիւնները, բարեգործական ու գթութեան նպատակներով կազմակերպութիւնները՝ շեղիլ իրենց հիմնական նպատակէն և զբաղիլ հայ մշակոյթի վերաբերեալ աշխատանքներով:

Այս ցրուած ու մասնակի աշխատանքները թէև որոշ չափով կը պահպանեն հայեցի դաստիարակութիւնը և ոգին, բայց հեռու են վտանքը խափանելէ և ապահովելէ հայ մշակոյթն ու կրթութիւնը: Հայ աշակոյթը սեփականութիւն պէտք է դառնար ընդհանուր հայութեան, անկէ ընտրուած ընդհանուր ղեկավարութեան մը տակ: Ան վեր պէտք է ըլլար կուսակցական, հասուածական, դաւանական և տեղացիական նկատումներէ:

Ազգային ոգին, դաստիարակութիւնը և մշակոյթը համահայկական են:

«Համազգային» Միութիւնս նպատակ կը դնէ իրեն զարգացնել հայ մշակոյթը և լեզուն ապակուսակցական, ապահատուածական, ապադաւանական և ապատեղացիական ոգիով:

Այս նպատակին հասնելու համար, Միութիւնս պիտի աշխատի հետեւեալ ուղղութեամբ.

ա. Յարաբերութեան մէջ պիտի մտնէ և սերտ կապեր հաստատէ հայ լեզուի, մշակոյթի, կրթութեան համար աշխատող, բայց ցրուած և իրարմէ անջատ ու տարբեր անուններով կազմակերպութիւններու, կուսակցութիւններու, միութիւններու հետ, և պիտի գտնէ գործնական միջոցներ՝ մշակութային և կրթական աշխատանքներու համախմբման և ընդհանուր ուղղութեամբ ղեկավարութիւն ստեղծելու համար:

բ. Հետամուտ պիտի ըլլայ իր շուրջ հաւաքելու հասարակական այն տարրերը, որոնք նախանձախնդիր են հայ կրթութեան, լեզուի և մշակոյթի պահպանման. պիտի ջանայ կազմակերպել այդ տարրերը, անոնց տալով նախաձեռնութիւն՝ աշխատելու և գործելու իր որդե-

դրած ուղիով :

2. Միութեանս հիմնական նպատակն է ա. հասնող սերունդին կրթութիւնը. բ. հասակաւորներու ինքնազարգացումը. գ. հայագիտութեան մշակումը :

3. Հասնող սերունդի կրթութեամ Ռամար՝

ա. Պիտի հիմնէ մէկ-երկու ճիւղանի միջնակարգ վարժարաններ, եւրոպական գոյէճներու և լիսէներու համաստիճան :

բ. Պէտք է բանայ մանկական հաստատութիւններ, քառամեայ և ութնամեայ դպրոցներ, ինչպէս և երեկոյեան, շրջուն և այլ պարբերական դասընթացքներ՝ յարմարուելով տեղին ու պահանջին :

գ. Պէտք է կազմակերպէ հայերէն լեզուով դասագրքերու պատրաստութեան և հրատարակութեան գործը :

դ. Պէտք է կազմակերպէ մանուկներու և պատանիներու համար ընթերցանութեան գրքերու, գիտական ու պատմական ընթերցարաններու և պարբերականներու հրատարակութիւնը :

4. Հասակաւորներու իմքնագարգացմամ Ռամար՝

ա. Պէտք է կազմակերպէ շրջուն-պարբերական դասախօսութիւններ հայ կեանքի, պատմութեան ու գրականութեան մասին, ինչպէս և ընդհանրապէս պատմական, ընկերային, տնտեսագիտական, բնագիտական ամէն տեսակ նիւթերու շուրջ :

բ. Պէտք է կազմակերպէ ինքնազարգացման նպատակու և չափահասներու ընթերցանութիւնը ղեկավարելու

պարբերական մը, բիւրօ մը և շրջուն վարիչներ:

գ. Պէտք է կազմակերպէ հանրամատչելի գիտական երկերու հայերէնի վերածումը և հրատարակութիւնը. նոյնպէս ինքնագիր հայերէն ուսումնասիրութիւններու հրատարակութիւնը, ինչպէս և ինքնագիր ու թարգմանական գրական-գեղարուեստական ստեղծագործութիւններու հրատարակութիւնը:

դ. Պէտք է ձեռնարկէ հին ու նոր հայ հեղինակներու ժողովրդական հրատարակութեանը թէ՛ առանձին հատորիկներով և թէ՛ անոնց լաւագոյն էջերուն ծաղկաքաղը: Ինչպէս և գրաբար հեղինակութիւններու աշխարհաբարի վերածումը:

ե. Պէտք է ձեռնարկէ ամէն տեսակի պատմական, գրական, աշխարհագրական, կենցաղագիտական, ծարտարապետական պատկերազարդ արվումներու, քարտերու, քարտէզներու և շարք-նկարներու հրատարակութեանը:

Ե. Հայագիտութեամ մշակմամ համար՝

ա. Պէտք է ձգտի օժանդակելու հայագիտական երկերու հեղինակներուն որոշ փոխադարձ պայմաններով, կա՛մ գնելով երկերը, կա՛մ յանձն առնելով հրատարակութիւնը. և այլ բոլոր հնարաւոր միջոցներով պէտք է թեև տայ հայագիտական ուսումներու մշակման թէ՛ հայ և թէ՛ օտար լեզուներով:

բ. Պէտք է ձգտի հայագիտական բարձրագոյն կաճառի մը հաստատմանը:

գ. Պէտք է կազմակերպէ հայերէնի թարգմանելու գործը ամէն տեսակի գիտական երկերու և հատուածներու, որոնք օտար գրականութիւններու մէջ հայ կեանքը

կը շօշափեն, հայ երկիրը, հայ անցեալն ու ներկան:

դ. Պէտք է կազմակերպէ հրատարակութիւնը կա՞մբ վերհրատարակութիւնը հին հայ գրական բնագիրներու, ձեռագիրներու, ժողովրդական բանահիւտութեան ժողովածուներու, ինչպէս և աւելի մօտիկ դարերէն ամէն տեսակ պատմական փաստաթղթերու, յուշերու, դիւաններու, գծագրութիւններու հրատարակութիւնը:

ե. Պէտք է կազմակերպէ հին ու նոր հայ հեղինակներու երկերուն ամբողջական-գիտական հրատարակութիւնը:

6. Այս բոլոր տեսակի գրքերն ու հրատարակութիւնները պէտք է ծախուին հնարաւոր աժան գիներով: Այլ և պէտք է կազմակերպուի ամէն հայ տուն ու խանութ հայերէն գիրք մտցնելու գործը:

Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ի Ր

11. ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

7. Ամէն հայ, առանց դաւանանքի և սեւի խտրութեան, կրնայ անդամակցիլ Միութեանս, երբ կ'ընդունի անոր Ծրագիրը և կ'ենթարկուի Կանոնագրի տրամադրութիւններուն:

8. Միութեանս անդամները կը բաժնուին երկու կարգի.

ա.) Գործօն անդամներ.

բ.) Օժանդակ անդամներ:

9. Գործօն անդամ կը նկատուին անոնք որ մուտքի

նուէր յը տալէ զատ, իւրաքանչիւր ամիս կամ եւամիս
կը վճարեն անդամական տուրք (տուրքի քանակը կ'որոշ-
ուի համաձայն տեղական պայմաններուն) և կը յաճա-
խեն անդամական ժողովներուն:

Ծանօթ. 1.— Գործօն անդամներն են որ ընտրելու
և ընտրուելու իրաւունք ունին:

10. Օժամդակ անդամ կը համարուին անոնք որ
Միութեանս հետապնդած նպատակներուն իրենց բարո-
յական աջակցութիւնը կը բերեն և նիւթապէս կ'օժան-
դակեն անոնց իրականացման:

Ծանօթ. 2.— Օժանդակ անդամները թէև ընտրելու
և ընտրուելու իրաւունք չունին, բայց կրնան ներկայ ըլ-
լալ այն անդամական ժողովներուն, ուր կը կատարուի
քարոյական և նիւթական հաշուետուութիւն:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

11. Միութիւնս ունի հետեւեալ ժողովները.

ա. Մասնախումբի ժողով

բ. Շրջանային "

գ. Ընդհանուր "

դ. Հիմնադիրներու "

12. Վերոյիշեալ ժողովներէն կը բխին հետեւեալ
վարչութիւնները.

ա. Մասնախումբի վարչութիւն

բ. Շրջանային "

գ. Կեդրոնական "

դ. Հիմնադիր "

IV. Ժ Ո Ղ Ո Վ Ն Ե Ր

1. Մասնախումբի ժողով

13. Առ նուազն 5 անդամներ կը կազմեն Մասնախումբ մը, որ կը վաւերացուի Շրջ. Վարչութեան կողմէ: Ծանօթ. 3.— Միենոյն վայրին մէջ նոր Մասնախումբ մը կազմուելու պարագային, պէտք է առնել նոյն վայրի արդէն գոյութիւն ունեցող Մասնախումբին կարծիքը:

14. Մասնախումբի հաւաքոյթը կը կոչուի Մասնախումբի ժողով, որ կ'ընտրէ իր Վարչութիւնը գաղտնի քուէարկութեամբ և ձայներու մեծամասնութեամբ: Մասնախումբի ժողովը կը վաւերացնէ վարչութեան գործերը և անոր հաշիւները:

2. Շրջամայիմ ժողով

15. Շրջանի գերագոյն մարմինը Շրջանային ժողովն է, որ կը կազմուի այդ շրջանի Մասնախումբերու ներկայացուցիչներէն:

16. Իւրաքանչիւր Մասնախումբ նախապէս կը ըննէ Շրջ. ժողովի օրակարգը և իր Վարչութեան մէկ անդամը կը զրկէ այդ ժողովին, իբրև ներկայացուցիչ:

17. Այն Մասնախումբերը, որոնք 5-է աւելի անդամ ունին, իւրաքանչիւր 50 հոգիի վրայ կ'ընտրեն մէկ պատգամաւոր, գաղտնի քուէարկութեամբ և ձայներու մեծամասնութեամբ:

18. Շրջ. ժողովին կրնան մասնակցիլ, մէկական ներկայացուցիչներով, այն կրթական և մշակութային միութիւնները, որոնք իբրև անջատ միութիւն կապուած են «Համազգային»ի հետ ֆետերատիւ կապերով, և այն կազ-

մակերպութիւնները, որոնք յենարան են Միութեանս զարգացման ու բարգաւաճման և այս մասին համաձայնութիւն ունին Միութեանս Կեդր. Վարչութեան հետ:

19. Շրջ. ժողովը կ'ընտրէ Շրջ. վարչութիւնը, կազմուած 3-5 անդամէ: Կը քննէ Մասնախումբերու ու անոնց Վարչութեանց գործերը, կ'որոշէ շրջանի պիւտձէն և գործունէութեան նախագիծը, իր բոլոր որոշումները կ'ենթարկէ Կեդր. Վարչութեան հաստատման և Ընդհ. ժողովին համար կ'ընտրէ պատգամաւորներ:

3. ԸՈՂՈՎ. ԺՈՂՈՎ

20. Ընդհ. ժողովը Միութեանս բարձրագոյն մարմինն է. անոր որոշումները պարտադիր են բոլոր Շրջանային և Մասնախումբի ժողովներուն ու անոնց վարչութեանց:

21. Ընդհ. ժողովը կը կազմուի բոլոր Շրջ. Վարչութեանց մէկական, բոլոր Շրջ. ժողովներու երկուական, Կեդր. Վարչութեան մէկ ներկայացուցիչներով և հիմնադիր անդամներու ձայնի իրաւունքով մասնակցութեամբ: Մէկական ձայնի իրաւունքով կրնան մասնակցիլ նաեւ այն կրթական ու մշակութային միութեանց վարչութիւններու ներկայացուցիչները, որոնք, ունենալով հանդերձ իրենց Ծրագիր - Կանոնագիրը, Ֆետերաթիւ կապերով կապուած են Միութեանս հետ, և այն կազմակերպութիւններն ու միութիւնները, որոնք թէև չեն կապուած ֆետերաթիւ կերպով, բայց յենարան են Միութեանս զարգացման և առանձին համաձայնութիւն ունին Կեդր. Վարչութեան հետ:

22. Ընդհ. ժողովը զազանի բուէարկութեամբ կ'ըն-

տրբէ կեդր. վարչութիւնը, կը բննէ անոր բարոյական
և նիւթական գործունէութիւնը, կը վաւերացնէ կամ կը
մերժէ Շրջ. ժողովներու որոշումները, կը պատրաստէ
հետագայ շրջանին համար գործունէութեան նախագիծ,
կը լուծէ կամ կը վաւերացնէ Մասնախումբերը, Շրջ.
վարչութիւնները, և կը գծէ այլ միութեանց հետ գոր-
ծակցութեան սահմանները:

4. Հիմնադիր ժողով

23. Հիմնադիր ժողովի անդամները ինն են. անոնք
իրաւական տէրն են Միութեանս: Այս ինը անդամները
ընտրուած են ցկեանս:

24. Մեռած կամ ինքնակամ կերպով Միութենէս
հեռացող իրաւատէր անդամի մը փոխարէն, մնացած ան-
դամները ձայներու $2/3$ ով կ'ընտրեն նոր իրաւատէր ան-
դամ մը իրենց առաջին իսկ ժողովին, նորէն ցկեանս:
Նոյն $2/3$ ի մեծամասնութեան ձայնով իրաւատէր անդամ
մը կրնայ հեռացուիլ Միութենէս:

V. Վ Ա Ր Ձ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

1. Մասնախումբի վարչութիւն

25. Մասնախումբի վարչութիւնը կը բաղկանայ
3-5 հոգիէ, կ'ընտրուի զաղտնի բուէարկութեամբ և
ձայներու մեծամասնութեամբ:

26. Մասնախումբի վարչութիւնը իր մէջէն կ'ընտրէ
իր ատենապետը, քարտուղարը և գանձապահը, և կը վա-
ւերացուի Շրջ. վարչութեան կողմէ:

27. Մասնախումբի Վարչութիւնը կը կատարէ Շրջ. Վարչութեան հրահանգները, կը գանձէ անգամատուրքեր՝ համապատասխան ընկալագրով, կը գումարէ Մասնախումբի հերթական ժողովներ, կապ կը պահէ Շրջ. Վարչութեան հետ, իր հաւաքած գումարները կը յանձնէ անոր, և կ'իրագործէ Շրջ. Վարչութեան տուած որոշումները.

2. Շրջանայիժ Վարչութիւն

28. Շրջ. Վարչութիւնը կը կազմուի 3 Տ հոգիէ, կ'ընտրուի գաղանի քուէարկութեամբ, Շրջ. ժողովի մեծամասնութեան կողմէ:

29. Շրջ. Վարչութիւնը իր մէջէն կ'ընտրէ իր ատենապետը, քարտուղարը և գանձապահը, ու կը վաւերացուի կեդր. Վարչութեան կողմէ:

0. Շրջ. Վարչութիւնը կ'իրագործէ Բնդհ. ժողովի, կեդր. Վարչութեան և Շրջ. ժողովներու որոշումները. ինքն է ղեկավարը և հսկիչը իր շրջանի բոլոր Մասնախումբերու Վարչութեանց:

31. Շրջ. Վարչութիւնը կապ կը պահէ այն մշակութային միութեանց և կազմակերպութեանց հետ, որոնք որոշ կապերով կապուած են Միութեանս և կամ աջակից են անոր, և որոնք պիտի աշխատին փոխադարձաբար օժանդակել իրարու և շխալաձևել զիրար իրենց ձեռնարկներով:

32. Շրջ. Վարչութիւնը իր հասոյթներուն 50 0/0 ը կը յատկացնէ իր շրջանի այն գործերուն, որոնք ճշդուած են Շրջ. և Բնդհ. ժողովներուն կողմէ. մնացած 50 0/0 ը պարտաւոր է ղրկել կեդր. Վարչութեան, իւրաքանչիւր երեք ամիսը անգամ մը ներկայացնելով նաև իր հաշուեկշիռը:

33. Երջ. Վարչութիւնը իրաւասու է իրագործելու այն բոլոր ձեռնարկները, որոնք նախատեսուած են Ընդհ. և Երջ. Ժողովներու կողմէ. իսկ չնախատեսուած ձեռնարկներուն համար Երջ. Վարչութիւնը պարտաւոր է նախապէս ատենել Կեդր. Վարչութեան հաւանութիւնը:

34. Այն Երջ. Վարչութիւնը որ չ'իրականացնելու իր վրայ գրուած պարտականութիւնները, կը լուծուի Կեդր. Վարչութեան կողմէ և նորը կը նշանակուի, մինչև շրջանի Երջ. Ժողովին գումարումը:

3. Կեդրոնական Վարչութիւն

35. Կեդր. Վարչութիւնը կը ներկայացնէ բոլոր շրջաններու վերին գործադիր իշխանութիւնը, որ կ'ընտրուի Ընդհ. Ժողովին կողմէ երեք տարի ժամանակամիջոցով, 3-5 անգամներով, գաղտնի քուէարկութեամբ և ձայներու 2/3 ով:

36. Կեդր. Վարչութիւնը կ'իրագործէ Ընդհ. Ժողովի տուած որոշումները:

37. Կեդր. Վարչութիւնը պարտականութիւն ունի կըթական, մշակութային և այլ միութեանց հետ-յարաբերութիւն մշակելու և Ֆետերաթիւ կապերով կապուելու այդ միութեանց և այն կազմակերպութեանց հետ, որոնք աշակից են Ռիութեանս և համակիր՝ անոր հետապնդած նպատակներուն: Նման կազմակերպութեանց հետ գործակցութեան ձևերը Կեդր. Վարչութիւնը ինք կ'որոշէ:

38. Կեդր. Վարչութիւնը պատասխանատուութեան կենթարկէ այն մարմինները և Ռիութեան այն ան-

գամները, որոնք շեղած են Ընդհ. և Շրջ. Ժողովներու հրահանգներէն ու որոշումներէն: Իրաւասու է պատժելու նման մարմիններն ու անդամները, մինչև արտաքսուած Միութեանս շարքերէն:

39. Կեդր. Վարչութիւնը մարմիններէն կը գանձէ անոնց եկամուտներուն 50 0 0 ը. կը ստեղծէ նոր ձեռնարկներ ու եկամուտի նոր աղբիւրներ, ուղղակի իր նախաձեռնութեամբ ու ղեկավարութեամբ: Կամ Ընդհ. Ժողովի տուած ցուցմունքներով:

40. Կեդր. Վարչութիւնը կը հրաւիրէ Ընդհ. Ժողով, նախորդ Ընդհ. Ժողովի որոշած ժամանակին:

41. Կեդր. Վարչութեան երեք կամ հինգ անդամներէն ամէն մէկը կը ստանձնէ աշխատանքի որոշ բաժնի մը ղեկավարութիւնը, բայց անխտիր ամէն գործի համար պատասխանատու են ամէնքը հաւաքաբար: Ամէն կարգադրութիւն պէտք է բխի Վարչ. Ժողովէն, որուն որոշումներուն արձանագրութիւնը պէտք է ստորագրուի Ժողովին ներկայ եղող անդամներուն կողմէ:

42. Կեդր. Վարչութիւնն է Միութեան բոլոր հաստատութիւններուն տեսչութիւնները կամ տնօրէնները նշանակողը, պայմանաւորողը և հրահանգներ տուողը: Կեդր. Վարչութեան և անոր գործակից կամ ենթակայ մարմիններուն միջև ո՛ր է տարակարծութեան պարագային, պարտադիր է Կեդր. Վարչութեան տեսակէտը, մինչև յաջորդ Ընդհ. Ժողովին դումարումը:

43. Կեդր. Վարչութիւնն է ամէն տեսակի նուէրներ, կտակներ ու գումարներ գանձողը: Անխտիր բոլոր գումարները պէտք է կեդրոնանան Կեդր. Վարչութեան ձեռքը և հոնկէ է որ պէտք է անցնին գործադրութեան:

Կեզր. Վարչութեան զրամական գործառնութիւնները պէտք է կրեն նախագահին ու գանձապետին և կամ իրենց փոխանորդներուն ստորագրութիւնները, երբ իրենք բացակային:

44. Կեզր. Վարչութիւնը զրաւոր տեղեկագիր կը ներկայացնէ Ընդհ. Ժողովին՝ Սիւլթան ունեցած գործունէութեան ու վիճակի մասին, ինչպէս և կ'ընէ նախորդ տարիներու զրամական հաշուետուութիւնը: Սիւլթամանակ կը ներկայացնէ նաև հետագայ տարիներու նախահաշիւները և գործունէութեան նախագիծը: Կեզր. Վարչութիւնն է որ կ'ուսումնասիրէ ու կը մշակէ նոր ձեռնարկներու և նոր փոփոխումներու ծրագիրները պատկան անօրէններուն կամ տեսչութիւններուն հետ խորհրդակցելով և առնելով Յրջ. Վարչութիւններուն կարծիքը:

4. Հիմնադիր Վարչութիւն

45. Ինք իրաւատէր անդամներու կազմը կը կոչուի Հիմնադիր Վարչութիւն, որ իր մէջէն ձայներու մեծամասնութեամբ կ'ընտրէ 3 հոգիէ բաղկացած Իիւան մը:

46. Հիմնադիր Վարչութեան անդամները կը մասնակցին Ընդհ. Ժողովին իբրև պատգամաւոր:

47. Հիմնադիր Վարչութեան անդամները ընտրելու և ընտրուելու իրաւունք ունին Կեզր. Վարչութեան մէջ:

48. Հիմնադիր Վարչութեան անունով կ'ընդունուին և կը հաստատուին բոլոր կտակները, բոլոր շահաբեր թուղթերը, բոլոր շարժուն և անշարժ կալուածները: Սիւլթան գոյքի սեփականատէրն է Վարչոր Հիմնադիրութիւնը, բայց այդ գոյքերու կառավարչութիւնը կը յանձնուի Ընդհ. Ժողովին կողմէ ընտրուած Կեզր. Վարչութեան:

VI. ՄԻՈՒԹԵԱՆ ԱՏԱՅՈՒԱԾՔՆԵՐԸ ՈՒ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

49. Միութեանս ստացուածքները կը կազմեն.

ա. Այն հասութաբեր կալուածները, շէնքերը, իրերը, արժեթուղթերը, ապահովագրութեան պոլիսները և այն ամէն գումարները որ նուիրուած կամ կտակուած են Միութեանս՝ անձեռնմխելի մնալու պայմանով և որոնց շահագործումն է միայն թողարտելի:

բ. Այն դպրոցական շէնքերը, տպարանը, ձուլարանը, թղթատունը, կազմատունը, խանութները — ըլլան նուիրուած լծէ գնուած — որոնք անմիջապէս կը ծառայեն դպրոցական հրատարակչական գործին և Միութեանս կենդանի գործունէութեան մէկ պիտանի մասը կը կազմեն:

գ. Միութեանս գնած կամ նուէր ստացած դպրոցական գոյքերը, գրադարանները, հաւաքածուները, նկարները, բարձեղները, Ֆիլիքական ու քիմիական աշխատանոցները, ձեռական արհեստանոցները և գործիքները, ինչպէս և Միութեանս հրատարակչական հաստատութիւններուն և մթերանոցներուն մէջ ունեցած գոյքերը, գնուած կամ նուիրուած:

դ. Միութեանս հրատարակութիւններուն դեռ չծախուած պահեստը:

50. Միութեանս եկամուտները կը կազմեն.

ա. Անձեռնմխելի ստացուածքներուն բերած տոկոսներն ու եկամուտները:

բ. Միութեանս բանեցուցած ձեռնարկներուն բերած զուտ շահը:

գ. Միութեանս եղած միանուագ նուէրները ամէն տեսակի ու ձևի, իբրև նիւթեղէն, իբրև գործիք, իբրև շէնք, իբրև հող, որոնք Միութեանս կրնան նկատուիլ ու

վերածուիլ տրամադրելի դրամի:

դ. Միութեանս հանդէպ եղած պարբերական յանձնառութիւնները, ինչպէս են գիշերօթիկ կամ ցերեկօթիկ սաներուն վճարը հոգալը, որոշ տեսակի կամ շաբթի երկերու հրատարակութիւնը ստանձնելը, որոշ ուղղութեամբ հեղինակութիւններուն պարբերական նպաստ մը՝ մրցանակի կամ այլ ձևի տակ. Միութեանս զանազան ձեռնարկներուն մէջ որոշ նիւթեղէնի մը հայթայթումը և այլն:

ե. Միութեանս պարբերական անդամավճարները:

զ. Միութեանս մարմիններուն միջոցով ձեռք բերուած յաւելուածական ու լրացուցիչ գումարները, ինչպէս են ներկայացումներէ, հանդէսներէ ու խաղերէ գոյացած գումարները, ամէն տեսակի պատահական ու հաւաքական նուէրներ զանազան հաւաքոյթներու միջոցին՝ վիճակախաղ, աճուրդ, նիշերու վաճառում և այլն:

է. Ի պրոցական հաստատութիւններու աշակերտներէն զանձուած թոշակները:


ը. Միութեանս հրատարակութիւններուն վաճառումէն գոյացած գումարները:

VII. ՄԻՈՒԹԵԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

51. Միութիւնս կրնայ լուծուիլ միայն Ընդհ. Ժողովի և Հիմնագիր Ժողովի խառն նիստի որոշումով, ձայներու $\frac{3}{4}$ ի մեծամասնութեամբ:

52. Միութեանս լուծման պարագային՝ իր ունեցած բոլոր ստացուածքն ու հարստութիւնները պէտք է փոխանցուին Հայաստանի կառավար-

րութեան: Եւ փոխանցումը պիտի կատարուի այդ բա-
ցառիկ ժողովի կողմէն ընտրուած յատուկ յանձնաժողո-
վի մը ձեռքով:



Այս ընդհանուր Ծրագիր-Կանոնագիրը փոփոխու-
թեամբ ընդունուած է Միութեանս Ե-րդ. Ընդհ. Ժո-
ղովին ՁԶ, 1936 Ապրիլ 4-5-ին:

Միութեանս Հիմնադիր անդամները կը ֆեան՝

Աղբալեամ Նիկոլ
Եսայեամ Ստեփան
Իփէկեամ Գասպար
Խաչատուրեամ Միմաս
Մալխասեամ Սարգիս
Շամթ Լևոն
Պալըքճեամ Յակոբ
Պալըքճեամ Սեդրակ
Օհանջամեամ Համօ

1936 Ապրիլ 4 5 ի Ընդհ. Ժողովին ՁԶ ընտրուած է
Միութեանս Կեդր. Վարչութիւնը հետեւեալ կազմով.

Բժ. Համօ Օհանջամեամ	Նախագահ
Ռուբէն Տէր-Միմասեամ	Անդամներ
Բժ. Ն. Պաղտիկեամ	